# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք, ՀՀ,
Լոռու մարզ, Գ.Գեղասար, Հեռ. 025560412, 077799399 ,
geghasar.lori@mta.gov.am

N 178
*19 հոկտեմբեր 2018թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Կից ուղարկվում է Գեղասար համայնքի ղեկավարի թիվ 42-Ա որոշումը:

Առդիր՝ 2 թերթ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վարազդատ Գրիգորյան**

*Կատ. Համայնքի ղեկավարի փեղակալ՝ Մ. Ավետիսյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 025560412, 077799399, geghasar.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հոկտեմբեր 2018թվականի N 42-Ա

## ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի, իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների և օժանդակ շինությունների 10.06.2008թվականի, 27.04.2010թվականի ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության 12.08.2010թվականի 1004-Ն որոշման պահանջներով, ինքնակամ կառուցված շենք շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասի իրավական կարգավիճակի մասին 510-Ն օրենքով, հիմք ընդունելով հողի բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 20.05.1991թ, թիվ 9 որոշումը, հողամասի սահմանների վերաբերյալ <<Արտյոմ Սաքանյան>> ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը և հարգելով Աստուր Մկրտչյանի և մյուսների դիմում-խնդրանքը այն մասին, որ Գեղասար համայնքում 06-028-0009-0007 ծածկագրի տակ գտնվող 0.11094 հա սեփականության իրավունքով իրենց պատկանող տնամերձ հողամասի վրա, որը տիրապետել, տնօրինել և օգտագործել են մինչ սեփականաշնորհումը, 1990թվականին կառուցել են բնակելի տուն, սակայն առաջին պետական գրանցման ժամանակ գրանցում չեն ստացել օրենքով սահմնված անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության պատճառով: Նկատի ունենալով որ տվյալ կառույցների պահպանում չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքով նախատեսված 60-րդ հոդվածի ցանկում. Որոշեցի՝

1. Օրենքի ուժով վերականգնել և ճանաչել Աստուր Ջավենի Մկրտչյանի /ծնված՝ 1960թ/, Համլետ Աստուրի Մկրտչյանի / ծնված՝1987թ/, Թեհմինե Աստուրի Մկրտչյանի /ծնված՝ 1988թ/, Հուսիկ Աստուրի Մկրտչյանի /ծնված՝ 1991թ/, Լեյլի Սերյոժայի Հովհաննիսյանի /ծնված՝ 1966թ/ սեփականության իրավունքը

Գեղասար համայնքում 06-028-0009-0007 ծածկագրի տակ գտնվող, սեփականության իրավունքով իրենց պատկանող 0.11094 հա տնամերձ հողամասի և նրա վրա 1990թվականի կառուցված 162,57քմ բնակելի տան 24,64քմ բաց պատշգամբի 5,58քմ պարիսպի նկատմամբ:

2. Սույն որոշման մեկ օրինակը տրամադրել համապատասխան ստորաբաժանմանը վերջիններիս սեփականության իրավունքի պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումը ուժի մեջ է կայացման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 19
գ.Գեղասար